ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ
SPECIAL TOPIC: COVENANT

ՀԿ-ի *berith* (BDB 136) տերմինը՝ ուխտը, այնքան էլ հեշտ չէ սահմանելը: Եբրայերենում չկա դրան համապատասխան ԲԱՅԸ: Բոլոր փորձերը ստուգաբանական կամ համանման սահմանում ստանալու համար համոզիչ չեն ստացվել: Սակայն, այս հասկացության ակնհայտ կարևորությունը ստիպել է աստվածաբաններին հետազոտելու բառի գործածությունը, փորձելու սահմանել դրա գործնական՝ ֆունկցիոնալ իմաստը:

Ուխտը մի միջոց է, որով միակ ճշմարիտ Աստված գործ է ունենում մարդկանց հետ: Ուխտի, դաշնագրի կամ համաձայնագրի գաղափարը կարևոր դեր է խաղում աստվածաշնչյան հայտնությունը հասկանալու մեջ: Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի միջև ընկած լարվածությունը հստակ երևում է ուխտի հասկացության մեջ: Կան ուխտեր, որոնք հիմնված են բացառապես Աստծո բնավորության և գործողությունների վրա:

1. հենց արաչագործությունը (տես՝ Ծննդոց 1-2)
2. Աբրահամի կանչը (տես՝ Ծննդոց 12)
3. Աբրահամի հետ ուխտը (տես՝ Ծննդոց 15)
4. Նոյին պահպանելը և նրան տրված խոստումը (տես՝ Ծննդոց 6-9)

Սակայն ուխտի բնույթը ինքնին պահանջում է պատասխան՝ արձագանք:

1. հավատքով Ադամը պետք է հնազանդվի և չուտի Եդեմի պարտեզի կենտրոնի ծառից
2. հավատքով Աբրահամը պետք է հեռանա իր ընտանիքից, հետևի Աստծուն և հավատա ապագա սերունդներին
3. հավատքով Նոյը պետք է կառուցի մի հսկայական նավ, որը հեռու է ջրից և հավաքի կենդանիներին
4. հավատքով Մովսեսը Իսրայելացիներին հանեց Եգիպտոսից դեպի Սինա լեռը և ստացավ հատուկ ուղեցույցներ կրոնական և սոցիալական կյանքի համար՝ օրհնության և անեծքի խոստումներով (տես՝ 2 Օր.27-29):

Մարդկանց հետ Աստծո փոխհարաբերության մեջ ըդգրկված այս նույն լարվածությունը հաղորդվում է «նոր ուխտի» մեջ: Այդ լարվածությունը կարելի է հստակ տեսնել համեմատելով Եզեկիել 18-ը Եզեկիել 36:27-38-ի հետ (ՅԱՀՎԵի գործը): Արդյո՞ք Աստծո ողորմած գործերի վրա հիմնված ուխտը պարտադրում է մարդու արձագանքը: Սա Հին և Նոր Ուխտերի միջև գտնվող վառվող կետն է: Երկուսի նպատակն էլ նույնն են՝

1. YHWH-ի հետ փոխհարաբերության վերականգնումը, որը մարդը կորցրել էր Ծննդոց 3-ում

2. արդար ժողովուրդ բարձրացնելը, որը կարտացոլի Աստծո բնավորությունը:

Երեմ.31:31-34-ի նոր ուխտը լուծում է այս լարվածությունը՝ հեռացնելով մարդկային մասնակցությունը որպես ընդունելության արժանանալու միջոց: Աստծո օրենքը արտաքին օրինապահության փոխարեն դառնում է ներքին ցանկություն: Աստվածավախ, արդար մարդկանց նպատակը մնում է նույնը, սակայն փոխվում է մեթոդը: Անկում ապրած մարդկությունը ապացուցել էր, որ արժանի չէր լինելու Աստծո պատկերի արտացոլանքը: Խնդիրը Աստծո ուխտը չէր, այլ մարդու մեղավորությունը և տկարությունը (տես՝ Հռոմեացիների 7; Գաղատացիների 3):

ՀԿ-ի պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև եղած նույն լարվածությունը մնում է ՆԿ-ում: Փրկությունը բացարձակ ձրի է Հիսուս Քրիստոսի ավարտած գործի շնորհիվ, սակայն այն պահանջում է ապաշխարություն և հավատք (թե՛ սկզբում և թե՛ շարունակվող՝ հարատև, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ ՆԿ-ՈՒՄ</u>): Հիսուսն Իր նոր փոխհարաբերությունը հավատացյալների հետ կոչում է «նոր ուխտ»: Այն թե՛ օրենքի հայտարարություն է և թե՛ Քրիստոսի պես լինելու կոչ (տես՝ Մատթ.5:48, Հռոմ.8:29-30, 2 Կորնթ.3:18, 7:1, Գաղ.4:19, Եփես.1:4, 4:13, 1 Թեսաղ.3:13, 4:3,7, 5:23, 1 Պետ.1:15), որը մատնանշում է, որ Աստծո կողմից ընդունված ես (Հռոմեացիների 4) և պատվիրում սրբություն (Մատթեոս 5:48): Հավատացյալները չեն փրկվում իրենց վարքով, այլ հնազանդությամբ (տես՝ Եփես.2:8-<u>10</u>, 2 Կորնթ.3:5-6, Փիլ.2:12-13): Աստվածահաճո ապրելակերպը դառնում է փրկության <u>վկայություն</u>, ոչ թե

փրկության միջոց (այսինքն՝ Հակոբոս և 1 Հովհաննես): Այնուհանդերձ հավիտենական կյանքն ունի տեսանելի առանձնահատկություններ (հավատքի կյանքի հիման վրա վստահություն, Եբրայեցիների 11): Այս լարվածությունը հստակ երևում է ՆԿ-ի զգուշացումների մեջ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԵՐՁՎԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ):

Հարմար, համառոտ հոդվածներ պայմանական ուխտերն ի հակադրություն անպայմանական ուխտերի կարող եք գտնել՝

1. Դ. Բրենթ Սենդիի գրքում՝ *Մաճեր և մանգաղներ. Սուրբգրային Մարգարեության և վախճանաբանական լեզվի վերանայում*, էջ՝ 44-47 /D. Brent Sandy's book, *Plowshares and Pruning Hooks: Rethinking the Language of Biblical Prophecy and Apocalyptic*/.
2. Ֆ. Ֆ. Բրյուսի *Հարցերի պատասխաններ*, էջ՝ 129-130 /F. F. Bruce, *Answers to Questions*/.
3. *Աստվածաշնչի խրթին խոսքերը*, էջ՝ 70-75 /*Hard Sayings of the Bible*/: